ԴԵՐԾՈՎԱԿԱԼ ԱՐՏԱՎԱՋԴ ԱՐԱՄԻ ՍԱՂՈՅԱՆ

1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և նրա կամակատար երկրների դեմ տարած հաղթանակում Խորհրդային Միության Կարմիր բանակի և ռազմածովային նավատորմի շարքերում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև ավելի քան 500.000 հայորդիներ, իսկ մոտ 100.000 սփյուռքահայեր պատերազմին մասնակցեցին ԽՍՀՄ-ի դաշնակից երկրների՝ ԱՄՆ-ի, ՄԵԾ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Կանադայի զինված ուժերի և հակաֆաշիստական դիմադրական և պարտիզանական շարժման շարքերում: Նրանցից շուրջ 200.000-ը իրենց մատաղ կյանքը զոհեցին այդ սրբազան պատերազմում: Նրանք աչքի ընկան ռազմի դաշտում ցուցաբերած հերոսությամբ և մարտավարական ունակություններով: Միայն Կարմիր բանակի շարքերում հայ ռազմիկները տվեցին 100-ից ավելի Խորհրդային Միության հերոսներ, Փառքի շքանշանի 26 լրիվ ասպետներ, շուրջ 70.000-ը պարգևատրվեց մարտական շքանշաններով ու մեդալներով: Պատերազմի մասնակից հայերից Հովհաննես (Իվան) Ստեփանի Տեր-Իսահակյանին (Իսակով) շնորհվել է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի, Հովհաննես (Իվան) Խաչատուրի (Քրիստափորի) Բաղրամյանին՝ Խորհրդային Միության մարշալի, Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին՝ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Արմենակ Արտեմի Խանփերյանցին (Սերգեյ Ալեքսանդրովիչ Խուդյակով)՝ ավիացիայի մարշալի, Սերգեյ Քրիստափորի Ագանովին՝ Ինժեներական զորքերի մարշալի, իսկ շուրջ 160 հոգու՝ գեներալի կոչում: Պատերազմի տարիներին Հ.Ս. Իսակովը եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հրամանատարի 1-ին տեղակալ, ծովային գլխավոր շտաբի պետ, Հ.Քրիստափորի Բաղրամյանը՝ 1-ին մերձբալթյան, ապա՝ 3-րդ բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, Ս.Ա. Խուդյակովը՝ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի 1-ին տեղակալ՝ Ռազմաօդային ուժերի շտաբի պետ: Հայ զորավարներից 3-ը եղել են բանակի, 8-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, ավելի քան 100-ը՝ բրիգադի ու գնդի հրամանատարներ[1]:

Հայ զինվորները, հրամանատարներն ու զորավարները մասնակցել են պատերազմի գլխավոր ճակատամարտերին բոլոր զորատեսակների կազմում. հրաձիգներ, հրետանավորներ, տանկիստներ, օդաչուներ, սակրավորներ, կապավորներ և այլն: Մի քանի հազար հայորդիներ պատերազմին մասնակցել են նաև ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի շարքերում: Նրանցից շուրջ 1000 ծովայիններ ու ծովային օդաչուներ մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել են կառավարական պարգևների: Արդեն նշեցինք՝ Հ.Ս. Իսակովին շնորհ-

[1] Арутюнян К. 2018, Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг., Ереван, «Зангак», 647.

վել է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում: Ասենք նաև, որ 4 փառապանծ հայորդիներ արժանացել են փոխ-ծովակալի (вице-адмирал), 4-ն էլ՝ դերծովակալի (контр-адмирал) կոչման: Վերջիններիս թվում էր Արտավազդ Սաղոյանը:

Արտավազդ Արամի Սաղոյանը ծնվել է 1904 թ. հունվարի 16-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում: 1921 թ. ավարտել է 2-րդ դասի դպրոցը: Մեկ տարի անց՝ 1922 թ. հոկտեմբերին ընդունվել է Բաթում քաղաքի ռազմածովային ուսումնարանը և այդուհետև կյանքը նվիրել ծովային գործին: 1924-1927 թթ. սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Ֆրունզեի անվան ռազմածովային ուսումնարանում, ապա ծառայել Կասպիական ռազմական նավատորմում, սկզբում՝ «Մարկին», հետո՝ «Կարմիր Ադրբեջան» ռազմանավերի վրա՝ որպես հերթապահող (вахтенный): 1930-1931 թթ. սովորել է Կարմիր բանակի ռազմածովային ուժերի հրամանատարների կատարելագործման հատուկ դասընթացների հրետանային դասարանում: Ավարտելուց հետո ծառայությունը շարունակել է Դվինա գետի ռազմական նավատորմի «Հարվածային» («Ударный») հրետանավակի վրա՝ որպես հրետանու հրամանատար: 1932 թ. ընդունվում է կոմկուսի շարքերը: 1933 թ. հունվարին առաջ է քաշվում Դվինայի գետային ռազմական նավատորմի շտաբի գլխավոր հրետանավորի պաշտոնում: 1936 թ. հոկտեմբերին կապիտան-լեյտենանտ Արտավազդ Սաղոյանն ընդունվում է Կ.Ե. Վորոշիլովի անվան Ռազմածովային ակադեմիան՝ հրետանային կրակի կառավարման սարքեր մասնագիտությամբ, որն ավարտում է 1941 թ. ապրիլին՝ գերազանցությամբ: Ուսման ընթացքում, 1937 թ. մարտին նրան շնորհվում է 3-րդ կարգի կապիտանի, իսկ 1941 թ. փետրվարին՝ 2-րդ կարգի կապիտանի զինվորական կոչում: Ակադեմիան ավարտելուց հետո նշանակվում է Կարմրադրոշ բալթյան նավատորմի թեթև ուժերի նավախմբի գլխավոր հրետանավոր: Այդ պաշտոնում 2-րդ կարգի կապիտան Ա.Ա. Սաղոյանը ծառայում է մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը[2]:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից 2-րդ կարգի կապիտան Ա.Ա. Սաղոյանը ակտիվորեն մասնակցում է Բալթիկ ծովում գերմանական զավթիչների դեմ մղված ծովային մարտերին, իսկ 1941 թ. հուլիսի 10-ից մինչև 1944 թ. օգոստոսի 9-ը՝ Լենինգրադի համար մղված մարտերին: Պատերազմի առաջին օրը նա գտնվում էր Կարմրադրոշ բալթյան նավատորմի գլխավոր ռազմածովային հենակետ Տալլինում և ղեկավարում էր «Суровый» և «Статный» էսկադրային ականակիրների հրետանային գործողությունները Ֆիննական ծոցի հենակետերի պաշտպանության ժամանակ: Իսկ երբ 1941 թ. օգոստոսի 5-ից սկսվեցին բուն Տալլինի ռազմածովային հենակետի պաշտպանական մարտերը, որոնք շարունակվեցին մինչև օգոստոսի 28-ը, մինչև հակառակորդի կողմից նավահանգիստ-քաղաքի զավթումը կապիտան Ա. Սաղոյանը ղեկավարում էր նավատորմի ռազմանավերի հրետանու կրակը, հետ մղում գերմանական վերջրյա և ստորջրյա

[2] ՌԴ ՌԾՆԿԱ (Ռուսաստանի Դաշնության ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվ), Դերծովակալ Արտավազդ Արամի Սաղոյանի ծառայողական-անձնական թերթիկ, թիվ 760380, թ. 1:

ուժերի գրոհները, այնուհետև ակտիվ մասնակցություն ունենում Տալլինի շրջանից Բալթյան նավատորմի ռազմանավերի դուրս բերման և Կրոնշտադտ փոխադրելու գործողությանը: Հակառակորդի շրջափակումից դուրս բերված ռազմանավերն ու դրանց անձնակազմերը խիզախորեն մարտնչեցին Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ, որը տևեց ավելի քան 900 օր: Երբ նավատորմի զգալի մասը բարեհաջող հասավ Կրոնշտադտ (29 օգոստոսի), Արտավազդ Սաղոյանը ծանր վիրավորվել էր և տեղափոխվեց հոսպիտալ: 1941 թ. սեպտեմբերի վերջին, սակայն, նա կրկին շարքում էր և ղեկավարում էր Բալթյան նավատորմի թեթև ուժերի նավախմբերի հրետանու գործողությունները: 1941 թ. վերջերին Արտավազդ Սաղոյանը առաջ քաշվեց Բալթյան նավատորմի գլխավոր հրետանավորի պաշտոնում, նրան շնորհվեց նաև 1-ին կարգի կապիտանի կոչում: Այդ պատասխանատու պաշտոնում իր արժանի ավանդը ներդրեց Լենինգրադի հերոսական պաշտպանության մեջ մասնավորապես և ճակատամարտում տարած հաղթանակի գործում: 1941 թ. հունիսի 22-ից մինչև դեկտեմբերի վերջը ծովային հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու և Տալլինի պաշտպանության օրերին ցուցաբերած խիզախության համար Բալթյան նավատորմի հրամանատար, փոխ-ծովակալ Վ.Ֆ. Տրիբուցի՝ 1942 թ. փետրվարի 4-ի թիվ 2 հրամանով Ա. Սաղոյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[3]:

Նավատորմի հրետանու գործողությունների հմուտ կազմակերպիչը մարտավարական ունակություններով և խիզախությամբ աչքի ընկավ նաև Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ. 1942 թ. փետրվար – 1944 թ. հունվար ամիսներին հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի կերպով կատարելու համար 1944 թ. հունվարի 23-ին Բալթյան նավատորմի էսկադրայի (նավախմբի) հրամանատար փոխծովակալ Յու. Ֆ. Ռալլիի թիվ 5 հրամանով 1-ին կարգի կապիտան Ա. Սաղոյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով[4]: Նրա պարգևատրման թերթիկում էսկադրայի շտաբի պետ, 1-ին կարգի կապիտան Հ. Սվյազովը նշել է. «Բարձր որակավորում և կրթություն ունեցող ծովային հրետանավոր ընկ. Ս.Ա. Սաղոյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմի բազմաթիվ գործողությունների Ռիգայի և Ֆինական ծովածոցերում, հրետակոծել հակառակորդի ափամերձ ամրությունները: 1941 թ. Տալլինի պաշտպանության ժամանակ նա ղեկավարում էր նավախմբի հրետանու կրակը, հմտորեն համաձայնեցնում և կազմակերպում նավային հրետանու գործողությունները՝ ցամաքային զորքերի հետ համատեղ, որի հետևանքով մեծ չափով բարձրացրեց Տալլինի պաշտպանության արդյունավետությունն ու երկարատևությունը»[5]: 1944 թ. հունվարի 15-23-ին, լինելով Բալթյան նավա-

[3] ՌԴ ՌԾՆԿԱ, Դեր-ծովակալ Արտավազդ Արամի Սաղոյանի ծառայողական-անձնական թերթիկ, թիվ 760380, թ. 1:

[4] ՌԴ ՌԾՆԿԱ, թիվ 760380, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172:

[5] ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172: Տալլինի պաշտպանությունը տևել է 1941 թ. հունիսի 22-ից մինչև օգոստոսի 28-ը:

տորմի էսկադրայի (նավախմբի) գլխավոր հրետանավոր, որի իրավունքները հավասարազոր էին 2-րդ նավախմբի հրետանու հրամանատարի իրավունքներին, Ա. Սաղոյանը, հաջողությամբ մշակեց և իրականացրեց 2-րդ էսկադրայի հրետանու համագործակցության պլանը՝ 42-րդ համազորային և 2-րդ հարվածային բանակների գործողությունների հետ:

«Նավախմբի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու և զգալի հաջողությունների հասնելու համար 1-ին կարգի կապիտան Ա. Սաղոյանը արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[6]:

Կարմրադրոշ բալթյան նավատորմի ակտիվ համագործակցությունը Լենինգրադը պաշտպանող խորհրդային ցամաքային ուժերի հետ մեծ չափով նպաստեց հերոս-քաղաքի պաշարման վերացմանը: 1944 թ. հունվարի 27-ի երեկոյան Լենինգրադում հրետանային հրավառություն տրվեց: Սակայն քաղաքի լրիվ անվտանգությունն ապահովվեց միայն 1944 թ. օգոստոսի 9-ին, երբ թշնամին ամբողջովին դուրս շպրտվեց Լենինգրադի մարզից: Այդ մարտերին ակտիվորեն մասնակցեց Բալթյան նավատորմը, այդ թվում նաև նավատորմի գլխավոր հրետանավոր Սաղոյանը (այս բարձր պաշտոնին նա նշանակվել էր 1944 թ. հունիսի 6-ին)՝ արժանանալով ծովային սպաների համար նախատեսված՝ Նախիմովի 2-րդ աստիճանի շքանշանին[7]: Նրա պարգևատրման թերթիկում նավախմբի հրամանատար դերծովակալ Լ.Ա. Վլադիմիրսկին 1944 թ. հուլիսի 4-ին գրել է. «Կարելյան պարանոցում Լենինգրադյան ռազմաճակատի 1944 թ. հունիսի 9-16-ին իրականացրած հարձակողական գործողության ժամանակ 1-ին կարգի կապիտան Ա. Սաղոյանը Կարմրադրոշ բալթյան նավատորմի նավախմբի շտաբի գլխավոր հրետանավորն էր: Հրետանային կրակի պլանավորման, նպատակակետերի հետախուզման և նշանառության ճշտման համակարգի ծավալման նպատակով իրականացված հսկայական աշխատանքի շնորհիվ նավախմբի նավերի հրետանային կրակը իրագործվեց բացառիկ արդյունավետությամբ: Կարմրադրոշ բալթյան նավատորմի նավախմբի հեռահար հրետանու կրակը շարքից հանեց ֆիննական ծոցի ափամերձ շրջաններում տեղաբաշխված հակառակորդի կրակային հանգույցները, որը մեծ չափով նպաստեց Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի առաջխաղացմանը: Նավախմբի նավերի կողմից Լենինգրադյան ռազմաճակատի զորքերին հրետանային ակտիվ աջակցություն ցույց տալու գործը հաջողությամբ կազմակերպելու համար 1-ին կարգի կապիտան Ա.Ա. Սաղոյանը արժանի է պարգևատրվելու Նախիմովի 2-րդ աստիճանի շքանշանով»[8]: Հաշվի առնելով նավախմբի հրամանատարի միջնորդությունը՝ Բալթյան նավատորմի հրամանատար, ծովակալ Վ.Ֆ. Տրիբուցը 1944 թ.

[6] ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172:
[7] ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 176:
[8] ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 176:

հուլիսի 8-ի թիվ 64 հրամանով 1-ին կարգի կապիտան Արտավազդ Սաղոյանին պարգևատրեց Նախիմովի 2-րդ աստիճանի շքանշանով[9]:

1944 թ. աշնանը, նկատի ունենալով Արտավազդ Սաղոյանի անբասիր ծառայությունը նավատորմում[10], Բալթյան նավատորմի շտաբի պետ, դերծովակալ Ա.Ն. Պետրովը 1944 թ. սեպտեմբերի 16-ին նրան ներկայացրեց պարգևատրման՝ Կարմիր դրոշի շքանշանով: Շտաբի պետը Ա.Ա. Սաղոյանի պարգևատրման թերթիկում նշել է. «1-ին կարգի կապիտան Սաղոյանը կարգապահ, լավ պատրաստված սպա է: Հայրենական մեծ պատերազմում նա իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, իր գործը լավ իմացող մասնագետ-հրետանավոր: Իր գիտելիքներով և եռանդով նա նպաստել է նավախմբի հրետանային պատրաստության մակարդակի բարձրացմանը: Անձամբ ակտիվորեն մասնակցել է նավատորմի մի շարք մարտական գործողությունների: 1944 թ. նոյեմբերի 7-ին լրանում է նավատորմում նրա ծառայության 21 տարի 4 ամիսը: Արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[11]: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. նոյեմբերի 3-ի հրամանագրով Արտավազդ Սաղոյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո 1-ին կարգի կապիտան Արտավազդ Սաղոյանը, որպես Բալթյան նավատորմի գլխավոր հրետանավոր, ծառայեց մինչև 1947 թ. դեկտեմբերի 11-ը, պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի (1946 թ.), Լենինի (1947 թ.) շքանշաններով, ապա առաջ քաշվեց ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի մարտական պատրաստության բաժնի գլխավոր հրետանավորի պաշտոնում: 1951 թ. հունվարի 27-ին Արտավազդ Սաղոյանին շնորհվում է դերծովակալի կոչում: 1951 թ. դեկտեմբեր – 1953 թ. ապրիլ ամիսներին դերծովակալ Ա.Ա. Սաղոյանը ԽՍՀՄ Ռազմածովային ուժերի 2 ինստիտուտի (գտնվում էր Լենինգրադում) պետի տեղակալն էր՝ հրետանային կրակի կառավարման սարքերի և օպտիկայի գծով: 1953 թ. ապրիլի 29-ին դերծովակալ Ա.Ա. Սաղոյանին վստահում են Ա.Ն. Կռիլովի անվան ռազմածովային ակադեմիայի մարտավարական ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը, որը նա վարում է մինչև 1956 թ. ապրիլի 12-ը: 1954 թ. պաշտպանում է գիտական ատենախոսություն և ստանում ռազմածովային գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1956 թ. նրան շնորհվում է դոցենտի կոչում: Ա. Սաղոյանը հեղինակ էր 2 մենագրության, շուրջ 10 գիտական հոդվածների՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմածովային ուժերի հրետանու մարտական օգտագործման, գետային նավատորմի նավերի, հրետանային կրակի, նավատորմի գլխավոր հենակետ Տալլինի պաշտպանության գործում նավային հրետանու դերի, Բալթյան նավատորմի 1941-1945 թթ.

[9] ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, g. 2, գ. 523, թ. 176:
[10] Ա.Ա. Սաղոյանը նավատորմում ծառայում էր 1922 թ. հոկտեմբերի 30-ից:
[11] ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, g. 2, գ. 523, թ. 173:

գործունեության վերաբերյալ թեմաներին: 1956 թ. ապրիլի 12-ին Ա. Սաղոյանը նշանակվում է ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գիտատեխնիկական կոմիտեի 4-րդ բաժանմունքի անդամի պաշտոնում: Նույն թվականին ռազմածովային նավատորմի հրետանու զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար պարգևատրվում է Կարմիր դրոշի երրորդ շքանշանով[13]: 1959 թ. փետրվարի 18-ից դերծովակալը կատարում էր ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարի հատուկ կարևոր նշանակության հանձնարարությունները: Ընդ որում, պահպանվում էին նրա ծառայողական-իրավական կարգավիճակը և վերջին աշխատավայրում ունեցած պաշտոնի աշխատավարձը: Արտավազդ Սաղոյանը նավատորմում ծառայեց մինչև 1959 թ. հոկտեմբերի 16-ը և պաշտոնաթող եղավ հիվանդության պատճառով: Դրանից հետո մինչև իր մահը՝ 1971 թ. հոկտեմբերի 17-ը, ապրում էր Մոսկվայում՝ Կրասնոպրեսնենսկի շրջանում: Հայազգի անվանի ծովակալը թաղվել է Մոսկվայի Նովոդևիչի գերեզմանոցում[14]:

Այսպիսով, 1941-1942 թթ Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ավելի քան 600.000 (այդ թվում՝ 100 000 սփյուռքահայ) պանծալի զավակներ իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակում՝ մեծ դեր ունենալով վճռական ճակատամարտերում: Հայերը աչքի ընկան նաև ռազմածովային նավատորմի շարքերում: Հովհաննես Իսակովն արժանացավ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի ամենաբարձր կոչման, որին արժանացել է ընդամենը 3 հոգի: Հայ ծովային սպաներից 4-ին շնորհվել է փոխծովակալի, 4-ին՝ դերծովակալի կոչում: Այս կոչմանն արժանացած Արտավազդ Սաղոյանը աչքի է ընկել Լենինգրադի համար մղված հերոսամարտում: Պատերազմի տարիներին նա վարում էր Կարմրադրոշ բալթյան նավատորմի գլխավոր հրետանավորի պաշտոնը: Քաջարի հայորդու կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը կարող է մեծ չափով նպաստել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հայկական զինուժի անձնակազմի բարոյական և մարտական ոգու բարձրացմանը:

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

[13] Лурье В.М. 2007, Адмиралы и генералы ВМФ СССР 1946-1960, Москва, «Кучково поле», 465.

[14] Арутюнян К. 2020, Участие сынов армянского народа в битве за Ленинград (10 июля 1941 г. – 9 августа 1944 г.), Ереван, «Эдит-принт», 63-66.